

11423



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Երթակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«15» 10 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 217 - 24

Նախաձեռնող՝

«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, Քավառ համայնք, ք. Գավառ փ. Ազգայության հ. 35/33

Գործունեությունը՝

Ալագյազ համայնքի Ճարճակիս բնակավայրի  
կրթահամալիրի կառուցում  
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 217 - 24

«15» հոկտեմբերի 2024թ.

**Արագածոտնի մարզի Ալազյազ համայնքի Ճարճակիս բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Հաշվետվություն/նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Ալազյազ համայնք, Ճարճակիս բնակավայր

**Ներածական մաս.** «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ն նախատեսում է Արագածոտնի մարզի Ալազյազ համայնքի Ճարճակիս բնակավայրի գոյություն ունեցող դպրոցի հարակից տարածքում՝ «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում կառուցել ժամանակակից պահանջներով և ստանդարտներով դպրոցի նոր շենք: Ծրագրի իրականացնողն է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏՀՀ)՝ ՀՀ կառավարության պետական բյուջեի միջոցներով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 21062024-02-0144, ծածկագիրը՝ 02-037-0020-0001 և Արագածոտնի մարզի Ալազյազի համայնքապետարանի կողմից տրամադրված նախագծման N9 թույլտվությունը, տրված՝ 2024 թվականի հուլիսի 7-ին:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:





Համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների եզրակացության՝ տեղամասի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է գրունտների 3 շերտով: Տեղամասում 6, 9 և 15 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Սակայն, հարկ է նշել, որ հարևանությամբ գոյություն ունեն ջրառուներ, որոնցից ջրերը թափանցում են հետախուզվող տարածք և փոսորակ ռեիեֆով վայրերում առաջացնում են ճահճացում: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

**Նկարագրական մաս.** Համաձայն տեխնիկական առաջադրանքի՝ նախագծվող դպրոցը կառուցվելու է ներկայիս դպրոցի մասնաշենքի հարակից տարածքում: Դպրոցի տարածքում քանդման, ապամոնտաժման աշխատանքները նախատեսված են դրանց ամբողջ ծավալով: Դպրոցը նախատեսված է 144 աշակերտի համար իսկ մանկապարտեզը 40 երեխաների համար: Համաձայն էքսիզային նախագծի՝ դպրոցը երկհարկանի է: Շենքն իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներից՝ երկհարկանի հիմնական դպրոցի մասնաշենքից, մարզադահլիճից, հանդիսությունների դահլիճից և մեկհարկանի մանկապարտեզից: Առաջին հարկում նախատեսված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ, հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, վարիչի և բժշկի սենյակ: Երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության սենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց: Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 144 հոգու համար: Մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա: Մանկապարտեզը նախագծված է 1 հարկից՝ 2 խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ:

Շինարարությունն իրականացվելու է երկու փուլով: Առաջին փուլի ընթացքում իրականացվելու են հողային և քանդման աշխատանքներ, այնուհետև գլխավոր մասնաշենքի կառուցում, որից հետո տարածքում իրականացվելու է բարեկարգում: Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 640 օր: Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի որոշում, կետ 111, 113. ՍՆԻՊ 1.04.03-85\* մաս II հիման վրա, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

Նախատեսված է քանդման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ քանդման աշխատանքները ներառելու են հողային հանույթի և կիսաավերակ կառույցի քանդման աշխատանքներ: Ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են ձեռքով, բահերով և մեխանիզմներով՝ մի քանի փուլերով:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել բազալտե երեսապատման սալիկներով և տրավերտինով: Նախագծում հակահրդեհային անվտանգության միջոցառումներն իրականացված են՝ համապատասխան ՀՀ-ում գործող նորմերի: Դպրոցի կառուցման շինարարական աշխատանքներում օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ:





կախովի ցեմենտի պանելներ, ֆիբրոցեմենտ, փայտ, մետաղ, մետաղական կառուցվածքներ, ամրանային ձողեր, ապակի, բարձրորակ երեսապատման սալիկներ, բետոն և պեմզաբլոկ: Աստիճանները երեսապատվելու են բազալտե սալիկներով, հատակը՝ մետլախային խեցեսալիկներով, վինիլներով: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից: Դպրոցի հարավային տարածքում նախատեսվում է տեղադրել 175 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ:

Նախագծով նախատեսված հրդեհային ազդարարման և տեսահսկման մասեր, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցերի, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխությանն համակարգերի ինժեներական լուծումները նախատեսված են տրամադրված տեխնիկական պայմանների և ՀՀ շինարարական նորմերի համաձայն:

Բնակելի համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 16780 մ<sup>2</sup>,
- ընդհանուր կառուցապատման մակերես՝ 2964 մ<sup>2</sup>,
- ընդհանուր բարեկարգման մակերես՝ 13816.7 մ<sup>2</sup>, որից կանաչապատումը՝ 9918 մ<sup>2</sup>:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փոում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ընդհանուր հողային աշխատանքների ծավալը 1460 խմ է, հետլիցքը՝ 150 խմ, և 130 խմ բուսաշերտ, որը կպահպանվի և կօգտագործվի հետագայում բարեկարգման աշխատանքների ընթացքում իսկ ավելացված հողային հանույթը կտեղափոխվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Հիմնական թափոնատեսակներն, որոնք կառաջանան շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է՝ 9468 կգ/տարի, և շինարարական աղբը՝ 350 խմ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են կապալառուի կողմից համապատասխան վայր:









մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, Ալազյազի համայնքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում: Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

### Փորձաքննական պահանջներ

1. Համալիրի շինարարության ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
2. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել Ալազյազի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծին համապատասխան:
3. Հողային աշխատանքների իրականացման ընթացքում սահմանել մասնագիտական հսկողություն՝ տարածքում հնարավոր կարմիրգրքյան բուսական և կենդանական տեսակների հայտնաբերման, պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության նպատակով՝ համաձայն գործող իրավակարգավորումների:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ալազյազի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության մշակույթի անշարժ 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և





հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշման 43-րդ կետի՝ որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արագածոտնի մարզի Ալազյազ համայնքի Ճարճակիս բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Բնաչիկ Մարտիրոսյան



«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Էլեն Մկրտչյան